

գում իւր զօրութեան: Կապ գաղթականութեան կարուածներն արդէն ինքնին աշակերտով վիճակի մէջ էին, այժմ անոնց վրայ աւելցան Տրանսպալա եւ Օրանժ, երկու նահանգ եւս, որոնց բնակիչը Կապի Անգղիոյ թշնամի տարրին հետ, համասնու — համախորհուրդ են: — Խաղաղութիւնը հաստատուեցաւ, եւ այն կարծուածէն շատ շուտ: Սակայն “այս խաղաղութիւնը, կ'ըսէ Բուրերու մէկ օրգանը „Petit bleu“ յիշատակին առ ժամանակեայ զինադադար մըն է, որով Անգղիա քաւականատեն Տրանսպալի գերին պիտի մնայ... վասն զի միշտ վտանգ կը սպառնայ ապստամբութեան:

Խաղաղութեան պայմանները:

1. Բուրգերներն իրենց տրամադրութեան տակ ունեցած բոլոր հրազէններն ու ռազմամթերքը Անգղիացոց պիտի յանձնեն:

2. Մայր երկրին սահմաններէն դուրս գտնուող Բուրերը՝ եթէ Անգղիոյ հպատակութիւնը յանձն առնուն, ետ պիտի դարձուն եւ ապրուստը պիտի հոգացուի տէրութեան ծախքովը:

3. Այս եղանակաւ ետ դարձող ու անձնատուր եղող Բուրերը՝ ոչ իրենց անձնական ազատութիւնն եւ ոչ ալ ստացուածքը պիտի կորսնցընեն:

4. Հողանտերէն լեզուն Տրանսպալի եւ Օրանժի դպրոցներուն մէջ անարգել պիտի աւանդուի: Նմանապէս դատաստանական զործողութեանց մէջ ներեալ է ի պահանջել հարկին նոյն լեզուն գործածել:

5. Պատերազմի ծախքը զոցելու համար ժողովրդեան վրայ մասնաւոր տուրք պիտի չըրորի:

6. Գրաւուած երկիրներուն իւրաքանչիւր վիճակներուն մէջ մասնաւոր պաշտօնեաներ պիտի հաստատուին՝ աղքատ ու շքաւոր ժողովրդեան պիտոյիցը դարման տանելու համար:

Անգղիոյ մինչեւ մարտ 31 ըրած պատերազմական ծախքն է՝ 222,974.000 Լ. տտ. (5.574 մլր. Ֆր.), որոնց վրայ եթէ ճնշական արշաւանագ ժամանակ ըրած ծախքն ալ աւելցնենք, կ'ընէ՝ 228,984.000 Լ. տտ.: Զենք հաշուի ֆարմաններու նորոգու-

թեան, արքայութեանը դարձնելու եւնի համար դեռ ընելու ծախքերը... Լոնդոնէ հասած վերջին տեղեկութեանց համաձայն զօրաց կորուստն է՝ 28.434 մոնեալ, որոնց մէջ 1072 պաշտօնակալ: —

Լոնդոն իւր արհաւիրք եղող այս երկարածիգ պատերազմին հոգեւէն այլ եւս ազատած, ամբողջ մտադրութիւնը իւր թագաւորին — Նդուարդ Է.ի — մնծ հանդիսութեամբ թագաւոր պատկուելուն վրայ դարձուց, որ պաշտօնական ծանուցմանց համաձայն տեղի պիտի ունենար ամսոյս 26ին, ըովանդակ պետութեանց ներկայացուցչաց եւ ամէն կողմանէ հարիւր հազարաւորներով Լոնդոն դիմած աշխարհաժողով բազմութեան սուղեւ: Սակայն դժբախտ պատահար մը ամբողջ ծրագիրը յօդս ցնդեց: Ամսոյս 24ին թագաւորին յանկարծ ծանր հիւանդութիւնը պատճառ եղաւ հանդիսութեանց՝ անտրոջ ժամանակի մը յետաձգուելուն: Օտար տէրութեանց ներկայացուցիչներէն ոմանք արդէն ետ դարձած են: — Լոնդոնէ հասած վերջին հետազոտները՝ թագաւորին վիճակին վրայ ոչ զոհացուցիչ լրեր կը բերեն:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌԵՍԵՐՄԵՆՏ

ԳՐԱՎԱՆ — Մ. Խորենացոյ պատմութեան աղբիւրաց

ինքնիւր. 193: — Լեզուական ինդիքներ. 199:

ՀԱՆԳՐԱՎԱՆ — Հին Նշանածունը. 201:

ՄԱՏԵՆԱԳՐԱՎԱՆ — Նկատողութիւններ Եղիշէի պատմութեան վերաբերեալ. 202:

ԵՆԵՆԱԳՐԱՎԱՆ — Բժիշկ Դոկտ. Նահապետ Ռուսինեան. 205: — Հազարդոս Աղայեան (պատկերաբար). 210:

ՄԱՏԵՆԱՆՕՍԿԱՆ — Կորին Վարդապետ եւ Նորին Թարգմանութիւնը. 212:

ՏԵՆԱԳՐԱՎԱՆ — ԳԱՏԱՐԱՎԱՆ — Ժողովի Կաթողիկոսարանը. 215:


ԼԵԶՈՒՆԱԲԱՆԱՎԱՆ — Արաբիկի գաւառաբարբառը. 219:

ԹՂԱՎԱԳՈՒԹԻՒՆ — Գրական ժամանց. 225:

Սիւլա ըմբռնում մը. 228:

ԱՇԽԱՆԱԳՐԱՎԱՆ — Հայաստան, Զորաստան եւ արեւմտեան Պարսկաստան բարեկական-ասորեստանեայ սեպագրերու համաձայն. 228:

ԲԵՂԱՎԱՆ ՏԵՍԻՒԹԻՒՆ 231:



ԿՐԱՆԱՐԱՎՈՐ ԵՒ ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ ՆՈՐԱԳՐՈՐ

Կ. ԱՍՓՈՏԱՆ Կ. ՊԱՐՈՆՉ

ՎԻՆԵՆԱ, ՄԻՒՐԱԲԵՆԱ ԶՅԱՐԱՆ